ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ 2

«ՀՀԿԳՆԳՀԾՁԲ-19/7» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգով սփյուռքահայ ուսուցիչների վերապատրաստման ծառայությունների գնման գործընթացի գնահատող հանձնաժողովի նիստի

Գնահատող հանձնաժողովի նիստը տեղի ունեցավ 24.05.19թ. ժամը 10:00-ին Էլեկտրոնային գնումների www.armeps.am կայքի միջոցով:

Մասնակցում էին՝

Հանձնաժողովի նախագահ՝ Կարեն Մնացականյան /գնահատող/

Հանձնաժողովի անդամներ՝ Թամարա Զալինյան /գնահատող/

Վարդան Ղանդիլյան /գնահատող/

Անուշ Գևորգյան /գնահատող/

Արա Խաչատրյան /բացող/

Անահիտ Ադամյան /բացող/

Հանձնաժողովի քարտուղար՝ Անուշ Մարգարյան

Հայտերի բացման և գնահատման մասին

1. Տեղեկատվություն հայտեր ներկայացրած մասնակիցների մասին.

1.1 ՀՀ կրթության և գիտության նախարարության կողմից էլեկտրոնային եղանակով կազմակերպված «ՀՀԿԳՆԳՀԾՁԲ-19/7» ծածկագրով գնման ընթացակարգին հայտ է ներկայացրել հետևյալ կազմակերպությունը.

Հ/Հ	Մասնակիցների անվանումները	Էլ. հասցեները
1	Խ. Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարան հիմնադրամ	info@aspu.am

2. Տվյալներ հայտերի կազմման և ներկայացման՝ հրավերի պահանջներին համապատասխանության մասին.

2.1 Մասնակցի կողմից ներկայացված հայտը կազմվել և ներկայացվել է հրավերի պահանջներին համապատասխան:

3. Տվյալներ յուրաքանչյուր հայտում պահանջվող փաստաթղթերի առկայության մասին.

3.1 Մասնակցի կողմից ներկայացված հայտում առկա են հրավերով պահանջվող փաստաթղթերը:

4. Տվյալներ յուրաքանչյուր մասնակցի ներկայացրած փաստաթղթերի՝ սահմանված պայմաններին համապատասխան կազմված լինելու մասին

4.1 Մասնակցի կողմից ներկայացված փաստաթղթերը համապատասխանում են հրավերով սահմանված պահանջներին:

5. Յուրաքանչյուր մասնակցի առաջարկած գինը.

5.1 Մասնակիցնը ներկայացրել է հետևյալ գնային առաջարկները.

Չափաբաժին	Նախահաշվային գինը, ՀՀ դրամ	Մասնակիցների անվանումները	
		Խ. Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարան հիմնադրամ	
		Առաջարկված գները, ՀՀ դրամ	
		առանց ԱԱՀ	ներառյալ ԱԱՀ
1	33810000	27495000	32994000

Ընդունվել է որոշում՝ կողմ 6, դեմ 0:

6. Տվյալներ առաջին և հաջորդաբար այլ տեղեր զբաղեցրած մասնակիցների վերաբերյալ.

6.1 Հիմք ընդունելով <<Գնումների մասին>> ՀՀ օրենքի 34-րդ հոդվածը, առաջին տեղ զբաղեցրած մասնակից ճանաչել Խ. Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարան հիմնադրամին:

Ընդունվել է որոշում՝ կողմ 6, դեմ 0:

7. Գնման գործընթացը կասեցնելու մասին.

7.1 Հիմք ընդունելով ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի 2019թ մայիսի 24-ի թիվ /ԲՔԱ-ԳՆ/2/8702-2019 գրությունը «Աութսորս» ՍՊԸ-ի կողմից 24.05.2019թ. բողոք ներկայացնելու վերաբերյալ, կասեցնել գնման գործընթացը մինչև բողոքի քննության արդյունքում ընդունված որոշումն ուժի մեջ մտնելու օրը ներառյալ:

7.2 Հանձնաժողովի հաջորդ նիստը հրավիրել բողոքի քննության արդյունքում ընդունված որոշումն ուժի մեջ մտնելու օրվան հաջորդող օրը ժամը 11:00-ին, ք. Երևան, Կառավարական տուն 2, 308 սենյակ հասցեում:

Ընդունվել է որոշում՝ կողմ 6, դեմ 0:

Գնահատող հանձնաժողովի նիստը տեղի ունեցավ 06.06.2019թ. ժամը 11:00-ին

8. Գնման գործընթացը շարունակելու մասին

8.1 Հիմք ընդունելով բողոքի քննության արդյունքում բողոքներ քննող անձի կողմից 04.06.2019թ կայացված և հրապարակված, ինչպես նաև սույն արձանագրության 6-րդ մասով ընդունված որոշումը՝ շարունակել հայտերի գնահատման գործընթացը ARMEPS համակարգով՝ էլեկտրոնային ձևով գնումների կազմակերպման կարգին համապատասխան:

Ընդունվել է որոշում՝ կողմ 6, դեմ 0:

9. Հանձնաժողովի հաջորդ նիստի վայրը, օրը և ժամը.

9.1 Հանձնաժողովի հաջորդ նիստը հրավիրել առաջին տեղ զբաղեցրած մասնակցից հրավերի II մասի 3-րդ բաժնով նախատեսված փաստաթղթերը, ինչպես նաև ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի կողմից համապատասխան եզրակացությունը ստանալուն հաջորդող երեք աշխատանքային օրվա ընթացքում, ժամը 11:00-ին, ք. Երևան, Կառավարական տուն 2, 303 սենյակ հասցեում:

Ընդունվել է որոշում՝ կողմ 6, դեմ 0:

Գնահատող հանձնաժողով՝

---------- Կ. Մնացականյան/նախագահ/

---------- Տ. Ջալինյան

---------- Վ. Ղանդիլյան

---------- Ա.Գևորգյան

---------- Ա. Խաչատրյան

---------- Ա. Ադամյան

---------- Ա. Մարգարյան /քարտուղար/